



ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

(Պարբերական գիտական ժողովածու)

Գիրք 10

Երևան

<<ՕՐ-ԴԱՐ>> հրատարակչություն

2017

**Գևորգ Կիրակոսյան**  
**Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

**Մարիամ Ավետիսյան**  
**Տնտեսագիտության թեկնածու**

**Բյուջետային համակարգի կատարելագործման ուղիները շուկայական  
հարաբերությունների պայմաններում<sup>1</sup>**

Շուկայական տնտեսության պայմաններում բյուջետային համակարգը տնտեսական զարգացման գործում ձեռք է բերում առանձնահատուկ դեր: Առավել ևս այնպիսի երկրներում, ինչպիսին Հայաստանն է, անցման սկզբնական ժամանակաշրջանում համեմատաբար ծախսատար և առաջնահերթ ծրագրերը կարող են ֆինանսավորվել հիմնականում բյուջետային համակարգի միջոցով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսավարման մոդելի փոփոխության, ինչպես նաև նոր հարաբերությունների անցմամբ պայմանավորված, մի կողմից, աճում են պետության և հասարակության ծախսային կարիքները, իսկ մյուս կողմից՝ դրսևորվում է ֆինանսական միջոցների խրոնիկ անբավարարություն: Նման իրավիճակում պետության առաջնահերթ խնդիրն է դառնում նվազագույն ծախսերով առավելագույն ծրագրերի ֆինանսավորումը, ինչը բավականաչափ բարդ, սակայն հրատապ լուծման կարիք ունեցող հիմնախնդիր է: Շուկայական տնտեսության պայմաններում բյուջետային համակարգը պետության ֆինանսական քաղաքականության հիմնական գործիքն է, որի նպատակները, ընդհանուր առմամբ, պայմանավորված են ողջ տնտեսական քաղաքականությամբ:

---

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-5B103 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Յուրաքանչյուր երկրի բյուջետային համակարգ ունի իր առանձնահատկությունները և կախված է պետության կառուցվածքից, պետական կառավարման համակարգից, տնտեսության զարգացման մակարդակից, նրա կառուցվածքային առանձնահատկություններից: Բոլոր դեպքերում, անկախ գոյություն ունեցող յուրահատկություններից, բյուջետային համակարգը պետք է հիմնված լինի արդյունավետության, կայունության և սոցիալական արդարության սկզբունքների վրա: Ներկայումս համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող գործընթացները վկայում են տնտեսության կարգավորման հարցում պետության դերի բարձրացման մասին, որն իր հետ առաջ է բերում նոր ֆունկցիաներ: Հատկապես շուկայական հարաբերություններին անցման շրջանում պետության դերը և գործունեության դաշտը միարժեքորեն մեծանում են, պայմանավորելով բյուջետային ծախսերի կոնկրետ տեսակների բազմազանությունը: Շուկայական տնտեսության անցմանը զուգընթաց բյուջետային հատկացումների կառուցվածքը, բնականաբար, կրում է արմատական փոփոխություններ, հիմնականում կապված պետական լծակների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև շուկայական ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտության հետ:

Պետական բյուջեի ցուցանիշների վրա զգալի ազդեցություն են թողնում պատմական զարգացման այս կամ այն ժամանակաշրջանում հասարակության կողմից լուծվող խնդիրները, պետության կողմից հռչակված առաջնահերթությունները, արտաքին և ներքին տնտեսական միջավայրում ծագող մարտահրավերները: Անշուշտ, դրանց փոփոխություններին զուգընթաց պետք է փոխվի նաև բյուջեի բովանդակությունը: Դա հատկապես դրսևորվում է շուկայական հարաբերություններին անցման փուլում, երբ դիրեկտիվ վարչարարությանը փոխարինելու են գալիս տնտեսության կարգավորման բյուջետային անուղղակի մեթոդները, փոխվում են բյուջետային քաղաքականության գերակայությունները, որոնք ընթացիկ խնդիրների լուծումից (ինչքան էլ դրանք կարևոր լինեն) անցնում են երկարատև նպատակային ծրագրերի մշակմանը և հետևողական իրականացմանը,

արմատապես փոխվում է բյուջետային պլանավորման մեթոդաբանական ու մեթոդիկական և այլն: Շուկայական հարաբերություններին անցմամբ պետական բյուջեն չի կարող և չպետք է նվազեցնի իր դերը. ըստ էության, տեղի է ունենում միայն տնտեսության վրա ներգործության բյուջետային մեթոդների փոփոխություն: Այդ փոփոխությանն է կոչված ծառայելու բյուջետային նոր հարաբերությունների և սկզբունքներն նոր բյուջետային մեխանիզմի ներդրումը և դրա շարունակական կատարելագործումը:

Բյուջեի տնտեսական էությունը, գործառույթները և դերը իրացվում են այնպիսի կազմակերպա-ֆինանսական կատեգորիաների միջոցով, ինչպիսիք են բյուջետային իրավունքը, բյուջետային համակարգը, բյուջետային մեխանիզմը, որոնք իրենց համապատասխան դրսևորումն են ստանում բյուջետային քաղաքականությունում: Վերջինս հանդես է գալիս որպես բյուջետային հարաբերությունների կառավարման համալիր կազմակերպաֆինանսական կատեգորիա՝ հիմնված գիտականորեն հիմնավորված կոնցեպցիայի վրա: Եթե այն բացակայում է, ապա չի կարելի խոսել բյուջետային քաղաքականության մասին որպես այդպիսին: Այլ կերպ ասած, բյուջետային քաղաքականությունը պետք է հիմնված լինի գիտականորեն հիմնավորված սկզբունքների և մոտեցումների վրա, որի պարագայում միայն այն կնպաստի տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հարկ է նշել, որ բյուջետային քաղաքականությունն ունի իր սուբյեկտը և օբյեկտը: Առաջինի դերում հանդես են գալիս պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք մշակում, հաստատում, վերահսկում և իրականացնում են բյուջետային քաղաքականությունը, ինչպես նաև բյուջետային գործընթացի մյուս անմիջական մասնակիցները (բյուջետային միջոցներ հատկացնողները և ստացողները): Առավել բարդ է բյուջետային քաղաքականության օբյեկտի հարցը, որի վերաբերյալ տարաբնույթ մեկնաբանությունների առկայությունը խոսում է դրա վերաբերյալ միասնական մոտեցման ու սահմանման բացակայության մասին: Շատ դեպքերում որպես

բյուջետային քաղաքականության օբյեկտ դիտարկվում են հարկաբյուջետային օրենսդրությունը, բյուջետային համակարգը և բյուջետային մեխանիզմը: Մեր կարծիքով, բյուջետային քաղաքականության օբյեկտը բյուջետային գործընթացն է ծախսերի իրականացման մասով, որն իր մեջ ներառում է բյուջետային իրավունքը, բյուջետային մեխանիզմը և բյուջետային համակարգը: Ընդ որում, վերջիններս հանդես են գալիս նաև որպես ընդհանուր բյուջետային գործընթացի կառուցվածքային տարրեր, որոնցից յուրաքանչյուրն օժտված է սեփական գործառույթներով և իրականացվող ծախսային քաղաքականության շրջանակներում իրեն վերապահված խնդիրներով:

Ժամանակակից աշխարհում հասարակական կյանքի տարբեր ոլորտների բարեփոխումներն առանց նոր կանոնների, պայմանների և կարգի օրենսդրորեն ամրագրման անհնար է պատկերացնել: Ըստ էության, տնտեսության պետական կարգավորումն, ի թիվս այլ գործիքների, իրականացվում է նաև բյուջետային մեխանիզմի միջոցով, որը ձևավորվում է օրենսդրությամբ ամրագրվող սկզբունքների հիման վրա: Պետական քաղաքականության իրականացումն ապահովող բյուջետային համակարգի կազմակերպական կառուցվածքը ևս ամրագրվում է երկրի օրենսդրությամբ: Այս տեսանկյունից, բյուջետային գործընթացը կանոնակարգող օրենսդրության մեջ ժամանակին և անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը հանդիսանում են բյուջետային մեխանիզմի կարգավորման կարևոր գործիքներից:

Պետք է նշել որ քաղաքական և տնտեսական բարեփոխումների անցած տարիներին Հայաստանի Հանրապետությունում այդ ուղղությամբ իրականացվել են զգալի աշխատանքներ, որոնց արդյունք են հանդիսանում ‘Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին’ օրենքի ընդունումը, գանձապետական համակարգի ներդրումը և մի շարք այլ քայլեր: Նշված դրական առաջընթացով հանդերձ, դեռևս չի հաջողվել ձևավորել բյուջետային ծախսերի պլանավորման ժամանակակից մոդել, ինչի հետևանքով ներկայումս գործող համակարգն ավելի շատ նման է պլանային տնտեսության պայմաններում

գործած համակարգին, քան համապատասխանում է շուկայական հարաբերությունների պահանջներին: Այս առումով, պետք է նշել, որ բյուջետային ծախսերի պլանավորման հիմքում պետք է դրվեն հետևյալ հիմնարար սկզբունքները.

- բյուջեի ծախսերը պետք է ուղղված լինեն երկրի տնտեսական զարգացման մոդելով պայմանավորված ռազմավարական խնդիրների լուծմանը,
- պետությունը և հասարակությունը պետք է հնարավորություն ունենան գնահատելու բյուջետային ծախսերի և իրականացվող միջոցառումների արդյունավետությունը,
- բյուջետային համակարգը պետք է լինի հաշվեկշռված, որի յուրաքանչյուր մակարդակը միասնական ռազմավարության շրջանակում կլուծի կոնկրետ խնդիր,
- բյուջետային միջոցները պետք է հատկացվեն առավել հրատապ խնդիրների լուծման համար և այնպիսի չափով, որը բավարար կլինի ընդունելի ժամկետներում ցանկալի էֆեկտի ստացման համար:

Մեր կարծիքով, նշված պահանջներից ելնելով պետք է որոշել բյուջետային ծախսերի ֆինանսավորման աղբյուրները, ծավալները, ժամկետները, օգտագործման և վերահսկողության մեխանիզմները: Միաժամանակ, պետք է սահմանել նաև նպատակային արդյունքային ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատել իրականացվելիք ծախսերի հիմնավորվածության աստիճանը: Վերջինիս կարևորությունը չափազանց մեծ է բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման տեսանկյունից, որին էլ, ըստ էության, ուղղված է վերջին տարիներին հանրապետությունում ներդրվող ծրագրային բյուջետավորման համակարգը: Իհարկե, այդ ուղղությամբ դեռևս գոյություն ունեն լուրջ հիմնախնդիրներ, հատկապես արդյունքային կամ ոչ ֆինանսական ցուցանիշների մշակման և ներդրման մասով: Սակայն ակնհայտ է, որ բյուջետային ծախսերի և դրանց օգտագործումից ստացվող

արդյունքների միջև ուղղակի կապի ամրագրման միջոցով է միայն հնարավոր բարձրացնել բյուջետային քաղաքականության արդյունավետությունը, հասցեականությունը և նպատակայնությունը: Ըստ էության, դրան պետք է ուղղված լինեն Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի առաջիկա տարիների բարեփոխումները՝ ինչպես համապատասխան օրենսդրաիրավական հիմքերի սահմանման, այնպես էլ ինստիտուցիոնալ ապահովվածության մակարդակի բարձրացման միջոցով:

Գևորգ Կիրակոսյան

Մարիամ Ավետիսյան

Բյուջետային համակարգի կատարելագործման ուղիները շուկայական  
հարաբերությունների պայմաններում

Հոդվածում քննարկված են շուկայական տնտեսության պայմաններում բյուջետային ծախսերի իրականացման հիմնախնդիրները և դիտարկված են դրանց լուծման հիմնական մոտեցումները: Վերլուծության են ենթարկվել բյուջետային ծախսերի վրա ազդող գործոնները, գնահատվել են դրանց ազդեցության եղանակները և ներկայացվել են առաջարկություններ դրանց չեզոքացման համար: Ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները:

ГЕВОРГ КИРАКОСЯН

МАРИАМ АВЕТИСЯН

В статье обсуждены проблемы осуществления бюджетных расходов и рассмотрены основные подходы по их решению в условиях рыночной экономики. Проанализированы факторы, влияющие на бюджетные расходы, оценены формы их влияния и представлены предложения по их ликвидации. Представлены проблемы реализации бюджетной политики, пути их решения и основные подходы повышения эффективности бюджетных расходов в Республике Армения.

GEVORG KIRAKOSYAN

MARIAM AVETISYAN

The article discussed the problems of realization of budget expences and main approaches for solving them in the conditions of market economy. Factors affecting budget expences have been analyzed, estimated variants of their influence and presented suggestions for their elimination. The problems of realization of budget policy, the variants of their solutions and the main approaches of improving the efficiency of budget expences in the Republic of Armenia have been presented in the article.

Բանալի բառեր. բյուջետային քաղաքականություն, բյուջետային ծախսեր, բյուջետային ֆինանսավորում, պետական բյուջե, բյուջետային համակարգ:

Бюджетная политика, бюджетные расходы, бюджетное финансирование, государственный бюджет, бюджетная система.

Budget policy, budget expenditure, budget financing, state budget, budget system.